ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2022թ. **N _____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) 13-րդ կետում լրացնել նոր 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերի աստիճաններին կից հատվածներում (աստիճանների բացվածքի եզրերին) անցորդների անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է տեղադրվեն (կառուցվեն) մայթի նիշից 60-90 սմ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքներ: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերը սույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն պետք է ապահովված լինեն անհրաժեշտ լուսավորությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերը կամ տիրապետողները սույն որոշման 1-ին կետով նախատեսված պահանջներին համապատասխանող թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքների տեղադրումը (կառուցումը) պետք է ապահովեն մինչև 2023 թվականի հունիսի 1-ը: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն

որոշման հավելվածի 13-րդ կետում լրացվող նոր 3-րդ ենթակետի առաջին նախադասությամբ սահմանված պահանջները չեն տարածվում այն կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերի կամ տիրապետողների վրա, որոնք մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը արդեն իսկ տեղադրել (կառուցել) են անցորդների անվտանգությունը ապահովող միջոցներ (60-90 սմ բարձրությամբ):

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ վիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *համայնքի ավագանին սահմանում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը:*

Երևան քաղաքի ավագանու՝ 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման հավելվածով հաստատվել է *Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի* ***պարտադիր բարեկարգման կարգը*** (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 2-րդ կետում ամրագրված կարգավորման համաձայն՝ *պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը,* ***բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը****, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը,* ***որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով****:*

Կարգի 3-րդ և 4-րդ կետերում ամրագրված կարգավորումների համաձայն՝ *պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝* ***շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:*** *Կարգի գործողությունը տարածվում է Երևան քաղաքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝*

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

Նույն Կարգի 5-րդ կետով նախատեսված են պարտադիր բարեկարգման աշխատանքները, որոնցից են նաև օբյեկտների՝ թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ***ճաղեր*** և այլն) ցանկապատումը, դրանց փոխումը, փոխարինումը:

Ներկայումս շատ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերի աստիճաններին կից հատվածներում (աստիճանների բացվածքի եզրերին) տեղադրված չեն լինում ճաղեր, բազրիքաճաղեր, իսկ տարածքների մուտքերը նույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ապահովված չեն լինում անհրաժեշտ լուսավորությամբ, որի արդյունքում էլ հնարավոր չի լինում ապահովել բնակչության անվտանգությունը: Մասնավորապես, օրինակ՝ գործնականում շատ հաճախ գրանցվում են այնպիսի դեպքեր, երբ համապատասխան կոնստրուկցիաների բացակայության պայմաններում բնակիչները նշված հատվածներում անզգուշորեն վայր են ընկնում՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությունը: Ընդ որում, ինչպես պրակտիկան ցույց է տալիս՝ ռիսկային խմբում առավելապես երեխաներն են:

Կարգի 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված են պարտադիր բարեկարգման մի շարք պահանջներ, որոնք վերաբերվում են ***<u>խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերին, մայթերին:</u>***

Այս առումով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման հավելվածի 13-րդ կետում լրացնել նոր 3-րդ ենթակետ՝ նախատեսելով, որ *կիսանկուղային և*

նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերի աստիճաններին կից հատվածներում (աստիճանների բացվածքի եզրերին) անցորդների անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է տեղադրվեն (կառուցվեն) մայթի նիշից 60-90 սմ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքներ: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերը նույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն պետք է ապահովված լինեն անհրաժեշտ լուսավորությամբ:

Կարևորելով Նախագծով սահմանված պահանջների կատարումը, սույն հիմնավորմամբ բարձրացված հիմնախնդիրների լուծումը և սեփականատերերի, տիրապետողների կողմից պահանջվող միջոցները՝ Նախագծով առաջարկվում է նախատեսել, որ կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերը կամ տիրապետողները Նախագծով նախատեսված պահանջներին համապատասխանող թեթև կոնստրուկցիաների տեղադրումը (կառուցումը) պետք է ապահովեն մինչև 2023 թվականի հունիսի 1-ը:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ